

ԵՀՀ ծրագիր՝ «Արտահայտման ազատության արձագանքումը Հայաստանում»

Արտահայտման ազատության խնդիրներին նվիրված խորհրդակցության (Ծաղկածոր, հունվարի 30 - փետրվարի 1, 2009 թ.) արդյունքների և ստեղծված աշխատանքային խմբի մշակած առաջարկների (Երևան, մարտի 13, 2009թ. և ապրիլի 20, 2009թ.) հիման վրա ձևավորված ընդհանրական փաստաթուղթ

Հավաքների մասնակիցները ընդգծեցին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտներ, որոնք պետք է հաղթահարվեն Հայաստանում արտահայտման ազատությունը ապահովելու նպատակով: Այդ խոչընդոտների թվում են.

- Չկարգավորված կոնֆլիկտները հարևան երկրների հետ,
- Տեղեկատվության պակասը կամ բացակայությունը, ինչպես նաև տեղեկատվական հոսքերի սահմանափակումը,
- Գրաքննությունը, ինքնագրաքննությունը և իրապես անկախ և անկողմնակալ հեռուստաալիքների բացակայությունը,
- Արտահայտման ազատության իմաստի արժեզրկումը,
- Աղքատության մշակույթը,
- Հասարակական տաբուները,
- Անհանդուրժողականությունը,
- Համապատասխան օրենքների թերություններն ու դրանց կիրառումը, ինչպես նաև օրենքի գերակայության բացակայությունն ընդհանրապես,
- Տնտեսական գործոնները, ներառյալ կոռուպցիան և կաշառակերությունը,
- Տեխնոլոգիաների պակասը (օր. անբավարար ինտերնետ կապ),
- Հասարակության և մտավորականության պասիվությունը, քաղաքացիական հաստատակամության պակասն այս խնդրում,
- Կրթության խնդիրները, արհեստավարժության պակասը,
- Իրական ղեկավարման և հասարակական վստահության պակասը կամ բռնապետական կառավարումը:

Քննարկվեցին այն ռեսուրսները, որոնք, արտահայտման ազատությունը ապահովելու ճանապարհին կարող են օգտակար լինել խոչընդոտները հաղթահարելու գործում:

Ձևավորվեցին հետևյալ առաջարկները.

Առաջարկություններ հանրությանը.

- Ավելի ընկալելի դարձնել կառավարության դերը. հասարակությունը չպետք է սպասի մինչև իշխանության գլուխ կանգնածներն անթերի դառնան, այլ պետք է համագործակցի իր ղեկավարների հետ, նույնիսկ, եթե հանրության զգալի մասը նրանց համարում է ոչ լեգիտիմ: Շարունակական երկխոսության և իր գաղափարներն արտահայտելու համար հնարավոր ուղիներ փնտրելու միջոցով հասարակությունը կարող է իրացնել իր ներուժը՝ հանուն երկրի պաշտպանության և առաջընթացի:
- Ընդլայնել համագործակցությունը հասարակության տարբեր շերտերի, տեղի և միջազգային կազմակերպությունների միջև՝ ընդհանուր ռազմավարություններ մշակելու, ընդհանուր նպատակներ սահմանելու, հանրային միջոցառումների ընթացքում արտահայտման ազատությունն ապահովելու, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաները որպես այլընտրանքային միջոց օգտագործելու ճանապարհով:

- Նպաստել արտահայտչամիջոցների բազմազանեցմանը.**

ա. ինտերնետ ակունքների կամ “ինտերնետ-վարձույթների” միջոցով CD և DVD-ներով տարածել համակարգչային տեխնոլոգիաներին վերաբերող անհրաժեշտ գիտելիքներ, օրինակ՝ ինչպես բջջային հեռախոսով նկարած, նկարահանված կամ ձայնագրված նյութը տեղադրել you tube- ում (կամ դրա հայկական տարբերակում) կամ ուղարկել ինտերնետ-թերթի կայքէջին, ինչպես պատրաստել տեսահոլովակ և այլն: Սա մեծապես կնպաստի «քաղաքացիական լրագրության» տարածմանը, ակտիվացնելով հասարակության լայն շերտեր և բարձրացնելով հասարակական գիտակցությունը;

բ. Ժողովրդականություն վայելող կայքէջերում ըստ համապատասխան բնագավառների ստեղծել մասնագիտացված բաժիններ (օրինակ՝ արվեստ, գրականություն, քաղականություն, բարձր տեխնոլոգիաներ և այլն), որտեղ կներկայացվեն տվյալ բնագավառին վերաբերող տեղական և միջազգային ուշագրավ տեղեկություններն ու նորույթները, այդ թվում՝ համապատասխան թեմատիկ մամուլի վերլուծությունները, և, մյուս կողմից, կծավալվի հասարակական լայն քննարկում և բանավեճ նույն այդ հարցերի շուրջ: Բաժինները ստեղծելիս, որպես վարողներ ընդգրկել արտասահմանյան փորձը յուրացրած համապատասխան բնագավառների լուրջ պրոֆեսիոնալների, միաժամանակ լայն քարոզչություն ծավալել հասարակության շրջանում (ինտերնետի, մամուլի, հեռուստատեսության միջոցով) ապահովելու համար հնարավորինս մեծ հետաքրքրություն մասնագիտացված բաժինների հանդեպ:
- Նպաստել արտահայտման ազատությունը պաշտպանելուն ուղղված քաղաքացիական կամքի ձևավորմանը.**

ա. Ուսումնասիրել անկախության ողջ շրջանի ընթացքում ԱԱ իրավունքի պաշտպանության հաջողված օրինակները, (օրինակ «Գալա» հեռուստակայանի և «Ասպարեզ» ակունքի ծավալած գործունեությունը), մատնանշել դրանց հաջողության պատճառները՝ համապատասխան օրենքների լավ իմացություն, օրենքով չարգելված բոլոր հնարավորությունների լիարժեք օգտագործում, երկարատև պայքարի պատրաստականություն, գրագետ քարոզարշավի կազմակերպում և համագործակցություն տարբեր ՀԿ-ների և հասարակական լայն շրջանակների հետ, սեփական իրավունքների պաշտպանության հարցում խնդիրը մշտական իրավական շրջանակներում պահելու (խուսափելով հարցի ավելորդ քաղաքականացումից) հաստատականություն: Այս նպատակով կարելի է նկարահանել վավերագրական ֆիլմ-խրոնիկա: Հասարակության լայն շերտերում ցուցադրել այն ինտերնետային կայքերի, հեռուստահաղորդումների միջոցով և հասարակական ամենատարբեր քննարկումների ընթացքում:

բ. Նպաստել լայն հասարակական շերտերի իրավագիտակցության բարձրացմանը ԱԱ ամենատարբեր դրսևորումների պարագայում: Այդ նպատակով պատրաստել ֆիլմեր և հոլովակներ, կազմակերպել հեռուստատեսային հաղորդումների շարքեր, թերթային և ինտերնետային հրապարակումներ, քննարկումներ մասնագիտացված ինտերնետային բաժիններում (օրինակ՝ «հարց իրավաբանին» և «իրավաբանական խորհրդատվություն» սյունակներ, որոնք կվարեն փորձառու և արհեստավարժ իրավաբաններ): Նույն նպատակով ծրագրեր իրականացնել իրավաբանական ՀԿ-ների հետ, որոնք կունենան «թեժ գիծ» և անվճար իրավաբանական խորհրդատվություն կապահովեն ԱԱ սահմանափակումների պատճառով տուժած քաղաքացիներին, ինչպես

նաև կվարեն տարրական իրավունքների մասին գիտելիքների ձեռքբերման դասընթացներ:

- **Հասարակությանը հուզող հրատապ առօրյա խնդիրների ազատ արտահայտմանը նպաստող կենտրոնների ստեղծում.**
Հաշվի առնելով թաղային, թաղամասային կամ շրջանային (գյուղական) մակարդակով տեղական իշխանությունների պասիվությունն ու անտարբերությունը բնակիչների առօրյա հոգսերի հանդեպ, ինչպես նաև համատիրությունների ոչ լրիվ ձևավորված լինելը, ստեղծել թաղային կենտրոններ, որտեղ բնակիչները կկարողանան բարձրաձայնել իրենց հուզող խնդիրները (օրինակ՝ աղբահանություն, տարածքի մաքրություն և կանաչապատում, լուսավորություն, շենքերի հիմնապատերի ապօրինի քանդում, նկուղների և ավտոտնակների խնդիրներ, վերին հարկերի կամ շենքերի արտաքին տեսքի ապօրինի ձևափոխություններ, մոտակա «օբյեկտներից» լավող աղմուկ և այլն): Այդ կենտրոնները (որոնք պետք է ներգրավեն իրավաբանի, ինժեների, ճարտարապետի և այլն) կներկայացնեն խնդիրները համապատասխան թաղապետարանին կամ գյուղապետարանին, միաժամանակ փորձելով գործընթացին մասնակից դարձնել համատիրություններին և մինչև վերջ հետամուտ լինել խնդիրների լուծմանը:
- **Հասարակության հետ հետադարձ կապի ապահովում.**
Իրականացնել համապետական և համաժողովրդական նշանակության հիմնախնդիրների (տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ ոլորտներին վերաբերող) քննարկումներ, հետազոտություններ և հրապարակումներ: Դրանց արդյունքների հիման վրա փորձագիտական եզրակացությունների և առաջարկությունների փաթեթները տրամադրել պետական մարմիններին, այն գիտակցությամբ որ ժամանակակից աշխարհում տվյալ երկրի մրցունակությունը կարելի է ապահովել առավելագույն չափով շրջանառության մեջ դնելով կամ կիրառելով հասարակությունից եկող նոր գաղափարները, մտքերն ու ծրագրերը, այս կերպ ապահովելով պետություն-հասարակություն հետադարձ կապը:
- Ստեղծել լրագրողներին աջակցության ֆոնդ որի նպատակը կլինի առաջին հերթին աջակցել լրագրողների իրավունքների պաշտպանությանը բոլոր հնարավոր ոտնձգություններից, այդ թվում ֆինանսավորել նրանց պաշտպանությունը դատական կարգով:
- Պարբերաբար ուսումնասիրել ԱԱ վիճակը երկրում և տալ համապատասխան գնահատական և առաջարկություններ, դարձնելով դրանք լայն հասարակայնության սեփականություն:

Առաջարկություններ կառավարությանը.

- Տարբերակել արտահայտչամիջոցները, ապաքաղաքականացնել և հասանելի դարձնել դրանք՝ նոր տեսակետներ և գաղափարներ ներառելու նպատակով: Ժամանակակից աշխարհում կառավարության կենսունակությունը կախված է նրա մրցունակությունից: Մրցունակությունն իր հերթին պահանջում է, որ կառավարությունն իրականացնի հասարակության կողմից առաջ քաշված նոր գաղափարները, ծրագրերն ու նախաձեռնությունները: Ամեն ոք պետք է հասկանա, որ լճացումից խուսափելու համար կառավարությունը պետք է գործի բաց և թափանցիկ: Առաջընթաց ապահովելու նպատակով երկրի ղեկավարները պետք է կապ ապահովեն հասարակության հետ, և, ընդսմին, թույլատրեն խոսքի

ազատությունը, եթե ցանկանում են մնալ կենսունակ և մրցունակ: Այլ կերպ
ասած՝ տվյալ իշխանության գոյատևումը պահանջում է հարգանք
արտահայտման ազատության նկատմամբ:

- Կառավարության անդամների մոտ պետք է ամրապնդել այն գաղափարը,
որ արտահայտման ազատությունն անհրաժեշտ է՝ ապահովելու համար
կառավարության լեգիտիմությունն ու արդյունավետությունը, քանի որ
հասարակությունից մեկուսացած ղեկավարներն առավել խոցելի և
անպաշտպան են արտաքին վտանգների նկատմամբ: Խոսքի
ազատությունն ընդունելով որպես արժեք՝ կառավարությունը կապացուցի,
որ չի վախենում քննադատված լինելուց, և, այս կերպ, կվերագտնի
հասարակության վստահությունը:
- Հասարակական խորհրդակցությունների, տարբեր բնագավառներին
(տնտեսական, սոցիալական և մշակութային) վերաբերող հետազոտություն
ների և հրատարակությունների միջոցով՝ հավաքագրել և ստանալ
հասարակության արձագանքները: Կայուն երկխոսության ապահովումը
կառավարության ներկայացուցիչների, հասարակական կազմակերպություն
ների, գործարար շրջանակների, մշակութային և լրատվական
հաստատությունների ու անհատների միջև՝ կօգնի մշակել սկզբունքներ,
արժեքներ և գաղափարներ, որոնք կնպաստեն հանրության առաջընթացին
և երկրի մրցունակությանը:
- Ստեղծել կամ օգտվել հեռահար ուսուցման հնարավորություններից.
հաշվի առնելով Հայաստանում կրթական համակարգի անկատարությունը և
որ ձեռնարկվող փոփոխությունները գործնական արդյունք կտան տարիներ
անց, նպատակահարմար է լայնորեն օգտագործել հեռահար ուսուցման
հնարավորությունները կրթված, ժամանակակից գիտելիքներին
տիրապետող և ժողովրդավարական արժեքներ դավանող սերունդ
պատրաստելու համար: Միաժամանակ սա հնարավորություն կտա ամբողջ
հույսը չկապել արտասահմանում ուսում ստացող երիտասարդների հետ
որոնց մեծ մասը այդպես էլ չի վերադառնում Հայրենիք:
- Արմատախիլ անել անպատժելիությունը (մասնավորապես է ՋԼՄ-ների
նկատմամբ սահմանափակումները, լրահրողների հանդեպ բռնությունները,
նրանց մասնագիտական գործունեությունը խոչընդոտելը):
- Կառավարության գործելակերպում ապահովել առավելագույն
թափանցիկություն:
- Աջակցել համացանցն (internet) ավելի հասանելի դարձնելու խնդրում:
- Զխոչընդոտել այլընտրանքային լրատվամիջոցների ստեղծմանը:

Առաջարկվեցին նաև մի շարք թեմաներ հեռուստաքննարկումների և վավերագրական ֆիլմերի համար.

- Կրթության և արտահայտման ազատության հետ կապված
հիմնախնդիրներ,
- Զլուծված հակամարտություններ (ոչ պատերազմ, ոչ խաղաղություն) և
դրանց ազդեցությունը արտահայտման ազատության վրա,
- Արտահայտման ազատության կարևորությունը հասարակության
առաջընթացի համար,
- Արտահայտման ազատության պակասը ամենօրյա կյանքում,
- Զանգվածային լրատվամիջոցներ. արտահայտման ազատությունը ռեսուրս
է, թե՞ խոչընդոտ,

- Լրագրության վարպետություն և էթիկա,
- Տուժած լրագրողներ. լրագրողը և ոստիկանը:

Այլ առաջարկությունների շարքում էին լրացուցիչ հանրային խորհրդակցությունների և քննարկումների հետևյալ թեմաները.

- Արտահայտման ազատության երկարաժամկետ ռեսուրսների մշակման հնարավորություններ,
- Արտահայտման ազատություն և հասարակական գիտակցություն,
- Քաղաքացիական դիրքորոշում. էությունն ու բաղադրիչները,
- Արտահայտման ազատություն և անհատ, ներքին ազատություն,
- Պետություն և հանդուրժողականություն:

Խորհրդակցության ընթացքում ձևավորվեց **Աշխատանքային խումբ**, որն առաջարկեց կազմել «Պայմանագիր ալտերնատիվ էկրանի մասին»՝ «ալտերնատիվ էկրան» որը կարող է լինել կամ հասարակական քննարկումների ֆորում (ընդ որում թե՛ իրական ֆորում և թե՛ վիրտուալ), ինչպես նաև հեռուստաշուկաների շարք, որոնց միջոցով հասարակությանը կներկայացվեն բազմազան գաղափարներ: Ֆորումի հիմքում ընկած կլինի արտահայտման ազատության, այլությունը հարգելու և գնահատելու գաղափարը: Խումբը շեշտեց, որ այսօր Հայաստանում գործող ամբողջությամբ վերահսկվող «Լեգիտիմ էկրանը» միակողմանի է: Այն չի ներկայացնում հասարակության մեջ գոյություն ունեցող կոնցեպտուալ բազմազանությունը: Մինչդեռ, ազգային արժեքները ստեղծվում են ազատ արտահայտման դրսևորումների միջոցով, ապահովելով մշակույթի զարգացումը:

Ֆորումը կամ «ալտերնատիվ էկրանը» ստեղծվում է ոչ թե հեղինակների, այլ նրանց ստեղծագործական արտադրանքի ամբողջությունից: Ֆորումի միջոցով ծավալվող քննարկումները թույլ կտան հավաքել բազմազան կարծիքներ, մտքեր, գաղափարներ և ապահովել դրանց տարածումը հասարակության մեջ:

Խումբը առաջարկում է հետևյալ մոտեցումը. **ստեղծելով նորը** (ալտերնատիվ էկրանը), **չեզոքացնել հինը** (այսինքն՝ պաշտոնականը, որը չի արտահայտում հասարակության բազմակարծությունը): Նորի ստեղծումը ենթադրում է փուլային զարգացում:

Որպես առաջին փուլ խումբը առաջարկեց «Պայմանագիր ալտերնատիվ էկրանի մասին» մոդելը:

Աշխատանքային խումբը ընտրում է 7-14 բարձրակարգ մասնագետների տարբեր բնագավառներից՝

- Եզգրիտ գիտություններ /ֆիզիկա, մաթեմատիկա, աստղագիտություն/
- Մշակույթ /արվեստ, գրականություն/
- Կրթություն
- Համակարգչային տեխնոլոգիաներ
- Բիզնես, ֆինանսներ, տնտեսագիտություն
- Պատմություն, ժամանակակից հասարակագիտություն
- Արդյունաբերություն
- Գյուղատնտեսություն

«Պայմանագրին» միանալու ցանկություն հայտնած հեղինակները ստորագրում և հրապարակում են պայմանագիրը:

«Պայմանագրին» միացած հեղինակները որդեգրում են հետևյալ սկզբունքները.

- դրսևորել հարգանք միմյանց և ուրիշների արտադրանքի նկատմամբ,
- արտահայտման ազատությունը ընդունել որպես հասարակական միտքը արթնացնելու միջոց,
- ընդունել, որ հեղինակը, ստեղծելով իր «արտադրանքը» այլևս նրա լիարժեք տերը չէ: Այդ արտադրանքի ընկալումն է դառնում գնահատման հիմնական չափանիշը, ստեղծելով բազմաթիվ նոր ընկալումներ և մեկնաբանումներ: Վերջիններիս ակտուալ դառնալու պարագայում միայն կարելի է սպասել արտադրանքի թողած շոշափելի «նստվածք» հասարակության մեջ:
- այդ նոր մեկնաբանումների քննարկման ընթացքում պարտադիր պետք է ապահովվի իրական այլակարծության մթնոլորտ: Փակ հասարակություններում դա տեղի չի ունենում, այլույթյան տարբեր դրսևորումները դուրս չեն գալիս նեղ շրջանակներից: Ալտերնատիվ էկրանը պետք է դառնա այդ դրսևորումների հանդիպման վայր:
- մրցակցությունը պետք է լինի մեկնաբանումների, ընկալումների և գաղափարների այլ ոչ թե անձերի միջև:

Այսպիսով, խումբը առաջարկեց սկսել նոր էկրանի ձևավորումը, առաջին փուլում սահմանափակվելով մի քանի «էկրանիկներով», որոնք պետք է բավարարեն երեք պահանջներ՝ «թթվածնի» պահանջը (ապաճահճացում), ռեֆլեքսիայի պահանջը (հետադարձ կապ) և «կայծի» պահանջը (ինովացիա):

«Պայմանագրի» առաջին մասնակիցների ընտրությունը մեծ նշանակություն ունի, քանի որ այդ փուլում սկսված գործընթացի արդյունավետությունից է կախված մասնակիցների շրջանակի հետագա ընդլայնումը, որն իր հերթին ենթադրում է «պայմանագրի» հրապարակայնացումը: Առաջին «պայմանագրի» մասնակիցները կարող են ներկայացնել ինչպես մեկ այնպես էլ մի քանի ոլորտներ:

Վերջ: